# Ռուսաստանի խորհրդարանը լսում է հայ-ադրբեջանական բախումների հարցը

ՌԽՖՍՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեն սկսեց հայ-ադրբեջանական սահմանի շրջանում իրադրության մասին լսումները: Կոմիտեի նախագահ Սերգեյ Կովալյովն ասաց, թե «*Դա ոչ թե դատ է, այլ տեղի ունեցածի հստակ պատկերի հաստատման փորձ*»: Մոսկովյան փաստաբանների քաղաքային կոլեգիայի նախագահի տեղակալ Ալեքսանդր Կլիգմանը հաղորդեց, որ լսումների ժամանակ ենթադրվում է լսել երկու հանրապետությունների բնակչության ներկայացուցիչներին, այնտեղ եղած լրագրողներին, ինչպես նաեւ ԽՍՀՄ դատախազության ՆԳՆ-ի եւ պաշտպանության նախարարության պաշտոնատար անձանց: Պառլամենտական լսումներին բացի Հայաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչներից, մասնակցում են նաեւ Վրաստանի, Լիտվայի եւ Էստոնիայի պատգամավորները: ■